ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/4.2-26

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի

նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված

մրցութային հանձնաժողովի նիստի

2026թ. ապրիլի 17-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի «2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N4094-Լ հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ,
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

2026 թվականի մարտի 14-ին տեղի ունեցած մրցութային հանձնաժողովի նիստի արդյունքում ընդունված N3/4.2-26 արձանագրությամբ կայացված որոշման կատարման վերաբերյալ.

Նշվեց, որ

2026 թվականի մարտի 14-ին տեղի ունեցած մրցութային հանձնաժողովի նիստի արդյունքում ընդունված N3/4.2-26 արձանագրությամբ որոշվել էր՝

- **հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպության՝
  - **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ի,
  - **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ**-ի

կողմից ներկայացված հայտերը,

- **կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպության՝
  - **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ի հետ՝ 3,300,000.0 (երեք միլիոն երեք հարյուր հազար) (առանց ԱԱՀ) ՀՀ դրամ գումարի չափով,
  - **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ**-ի հետ՝ 3,300,000.0 (երեք միլիոն երեք հարյուր հազար) (առանց ԱԱՀ) ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպությունների հետ պայմանագրի կնքման ժամկետը ներկայումս ձգձգվում է, մասնավորապես 2026 թվականի մարտի 12-ին հաղթող ճանաչված «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի հետ պայմանագիրը դեռևս քննարկման փուլում է (ՀՀ էկոնոմիկայի նախարարության աջակցող ստորաբաժանումների համաձայնեցմանն է ներկայացվել 2026 թվականի մարտի 25-ից)՝ Հանձնաժողովը որոշեց առաջարկել 2026 թվականի մարտի 12-ի N2/4.2-26 արձանագրությամբ հաղթող ճանաչված՝

- **«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ին

և 2026 թվականի ապրիլի 14-ի N3/4.2-26 արձանագրությամբ հաղթող ճանաչված՝

- **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ին,
- **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ**-ին

վերանայել իրենց կողմից ներկայացված ծրագրի տևողությունը՝ այն է, ֆինանսական նախահաշվում աշխատանքների սկիզբը նախատեսել առնվազն 2026 թվականի մայիսի 10-ից, վերջնաժամկետ նախատեսել առավելագույնը 2026 թվականի դեկտեմբերի 10-ը, միաժամանակ վերահաշվարկել ծրագրով պահանջվող գումարը:

Միաժամանակ առաջարկվեց չեղյալ համարել 2026 թվականի ապրիլի 14-ի N3/4.2-26 արձանագրության արդյունքների 2-րդ կետը:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Չեղյալ համարել 2026 թվականի ապրիլի 14-ի N3/4.2-26 արձանագրության արդյունքների 2-րդ կետը:

2. Առաջարկել Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված թվով 3 (երեք) կազմակերպությանը՝

- **«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ին,
- **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ին,
- **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ**-ին

վերանայել իրենց կողմից ներկայացված ծրագրի տևողությունը՝ այն է, ֆինանսական նախահաշվում աշխատանքների սկիզբը նախատեսել առնվազն 2026 թվականի մայիսի 10-ից, վերջնաժամկետ նախատեսել առավելագույնը 2026 թվականի դեկտեմբերի 10-ը, միաժամանակ վերահաշվարկել ծրագրով պահանջվող գումարը:

3. Կնքել համապատասխան դրամաշնորհային պայմանագրեր այն կազակերպությունների հետ, որոնք կընդունեն Հանձնաժողովի սույն արձանագրությամբ հաստատված առաջարկները և առաջարկը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կներկայացնեն համապատասխան շտկված փաստաթղթերը:

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան (Հանձնաժողովի նախագահ)	-	_____
Ս.Հովհաննիսյան	-	_____
Դ.Կարապետյան	-	_____
Ա.Բաբայան	-	_____
Ա.Ոսկանյան	-	_____
Լ.Բասմաչյան	-	_____
Զ.Հայրապետյան	-	_____
Շ.Հովսեփյան	-	_____